ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

11.03.2020թ. ք. Իջևան

Կիրառական արվեստի ֆակուլտետի խորհրդի նիստին մասնակցում էին գիտական խորհրդի 13 անդամները: Հարգելի պատճառներով բացակա էր՝ Գ. Ջավրուշյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Ավարտական և կուրսային աշխատանքների ընթացիկ վիճակի քննարկում, նախապաշտպանության ժամանակացույցի հաստատում: /զեկ. Ա. Շ. Մարգարյան/
2. 2019-2020 ուստարվա 2-րդ կիսամյակի 1-ին ընթացիկի քննությունների և ստուգումների ժամանակացույցների քննարկում և հաստատում: /զեկ. Ա. Շ. Մարգարյան/
3. Ընթացիկ հարցեր /զեկ. Դ. Չիբուխչյանը/

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան հարցերի քննարկմանը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ հանդես եկավ դեկան Ա. Շ. Մարգարյանը և նշեց, որ պարբերաբար հարցումներ են անցկացվում ավարտական և կուրսային աշխատանքների ղեկավարների հետ, տեղյակ են վիճակի մասին, ուսանողները աշխատում են նաև տեսական հատվածի և էլեկտրոնային ցուցադրությունների պատրաստման վրա:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Հ. Ասատրյանը նշեց, որ փետրվարի 13-ին և 15-ին անց են կացրել նախապաշտպանություն և վերջնական հաստատել ավարտական աշխատանքների թեմաներն ու էսքիզները: Մինչև ապրիլի տասը որոշ ուսանողներ իրականացրել են իրենց աշխատանքների որոշ մասը: Այժմ հաջողությամբ շարունակվում են աշխատանքները և պարբերաբար խորհրդակցում են իրենց ղեկավարների հետ:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Մինչև մայիսի տասը ավարտական աշխատանքների թեզերը ներկայացնել ամբիոն՝ գրախոսներին տրամադրելու համար:

2. Մինչև մայիսի տասնհինգը ավարտել ավարտական աշխատանքների մակետները և ներկայացնել մասնաճյուղ:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի երկրորդ հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա. Շ. Մարգարյանը և ըստ մասնագիտությունների ներկայացրեց 2018-19թթ. ուստարվա երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցը, ավարտական կուրսերի քննաշրջանի գրաֆիկը և նշեց, որ վերջինս քննարկվել է նաև ուսանողների շրջանում, որի արդյունքում հաշվի են առնվել նրանց կարծիքները ևս:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ք. Մխիթարյանը, Դ. Չիբուխչյանը: Նրանք ի գիտություն ընդունեցին ներկայացված ժամանակացույցը, քննաշրջանի գրաֆիկը և առաջարկեցին հաստատել:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2018-19թթ. ուստարվա երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցը և գրաֆիկը ներկայացնել ՈՒՄՎ հաստատելու համար:

Ընթացիկ առաջին հարցի վերաբերյալ հանդես եկավ արտադրական պրակտիկայի ղեկավար Դ. Չիբուխչյանը, որը ներկայացրեց իր կողմից կազմված ծրագրի բովանդակությունը, անցկացման ձևը ու մեթոդները: Նա մասնավորապես նշեց, որ պրակտիկայի որոշ ժամանակահատված անհրաժեշտ է անցկացնել մասնաճյուղում: Ձեկուցողը մպատակահարմար գտավ պրակտիկայի առաջին օրը ուսանողների հրավիրել բուհ՝ պայմանավորվածություններ ձեռք բերելու պրակտիկայի ընթացքում իրականացվելիք աշխատանքների վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Պրակտիկայի կազմակերպման ծրագրերը հաստատել և ներկայացնել ուսումնամեթոդական վարչություն:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. Շ. Մարգարյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ք. Հ. Մխիթարյան